

Սիրելի հայրենակիցներ,

«Լրատու»ի այս թիւին պատրաստութիւնը կը գուգադի-
պի Կիպրոսի տնտեսութիւնը վերջնական սնանկութենէ
փրկելու համար տարուած գերմարդկային ճիգերուն եւ
ճգնաժամային պահերու նախօրեակին:

Մի քանի շաբաթներ առաջ միայն ընտրուած Նախագա-
հին ու կառավարութեան դիմաց դրուեցաւ Կիպրոսի դրա-
մավարկային համակարգին խիստ վտանգաւոր կացութիւ-
նը: Դրանատուները անմիջապէս փակուեցան. իրավիճակ
մը, որ «Եռլորկորուփ»ի ճնշիչ պայմաններուն տակ, շփոթի
ալիք մը յառաջացուց կղզին ներս: Ժամանակը դէմ կը
գործէր երկրին ապագային նկատմամբ ու պէտք էր առանց
յապաղումի առաջքը առնել: Երկրին տնտեսութիւնը վերա-
կանգնելու նպատակով, գրեթէ ոչինչ մնացած էր ընելու՝
բացի դիմել չարեաց փոքրագոյն լուծումին:

Նորընտիր Նախագահ Պրն. Նիկոս Անաստասիատիս եւ
իր գլխաւորած պատուիրակութիւնը, 24 Մարտին երկրորդ
անգամ ըլլալով, մեկնեցան Պրիլքսէ, ուր տեղի ունեցան
երկարաժամ բանակցութիւններ մինչեւ առաւօտեան կա-
նուխ ժամերը: Զեռքբերուած արդիւնքը, տիրող չափա-
գանց դժուար պայմաններուն տակ, միակ ելքը կարելի ե-
ղաւ համարել վերջնական փլուզումէ փրկելու անդունդին
եզրին հասած դրութիւնը: Տնտեսութեան Նախարար Պրն.
Միխալիս Սարդիսի արժեւորումով պատերազմը չշահե-
ցանք, սակայն կարելի եղաւ երկիրը դնել տնտեսական եր-
կարատեւ վերակառուցման ծրագրի մը ճամբուն վրայ, որ

մինչեւ 2018 թուական պիտի համապատասխանէ մնացեալ Ելրոպական Երկիրներու մակարդակին:

«Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետութեան Օրէնքներուն» բաժինով, հակիրծ ձեւով նշած ենք Կիպրոսի Վարկային համաձայնագիրին շուրջ համաձայնուած կէտերը:

Յոյսով ենք, որ կարիքը չենք ունենար յաւելեալ խստապահանջ պայմաններու գործադրումին եւ յաջորդող տարիներու ընթացքին, կարելի կը դառնայ աստիճանաբար դուրս գալ այս ճգնաժամէն:

Գալով Կիպրահայ համայնքին, Կիրակի, 27 Յունուար 2013-ին, միացեալ կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան եւ Երեսփոխանական Գրասենեակին, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ «Մենք կ'երգենք Զեզի համար» գեղարուեստական Երեկոն՝ նուիրած Սուրիհահայութեան: Զեռնարկին մանրամասնութեամբ անդրադարձած ենք «Լրատու»ի թիւ 5 էջով:

Ինչպէս տեղեակ էք, Փետրուարի սկիզբը Կիպրոսի թըրքագրաւեալ շրջանին մէջ լոյս տեսնող թերթերուն մէջ հրապարակութցաւ յայտարարութիւն մը, որու մէջ կը նշուէր, թէ Կիպրոսի գրաւեալ շրջանի Վիքթորիա փողոցին վրայ գտնուող Յայկական Եկեղեցական համալիրը նշակութային կեղրոնի պիտի չվերածուի: Այս ձեռքբերումը կարելի եղաւ ապահովել շնորհիւ Կիպրահայ համայնքի ցուցաբերած միասնական ջանքերուն, դիւանագիտական առաքելութիւն իրականացնող պատուիրակութիւններու եւ հեղինակութիւն ունեցող կազմակերպութիւններու եւ անհատներու մօտ՝ ի մասնաւորի Միացեալ Նահանգներու Կիպրոսի մէջ Դեսապան Ն.Վ. ճնն Քէօնիկի:

Այս տարի դարձեալ պիտի այցելենք Ս. Մակարայ Վանք Կիրակի, 19 Սայիս 2013-ին, մեր ուխտը վերանորոգելու եւ անգամ մը եւս հաստատելու, թէ Կիպրահայ Համայնքը տէր է ու կառչած կը մնայ իր պատմամշակութային արժեքնե-

րուն: Ներփակ պիտի գտնէք այս ուխտագնացութեան գծով յայտարարութիւնը:

Խօսքիս վերջաւորութեան մեծ հաճոյքով կը փոխանցեմ, թէ «Նանոր» Հայկական Մանկական Կեդրոնի կազմակերպական եւ այլ աշխատանքները գրեթէ ամբողջացած ոլլալով, Ապրիլ 15-էն սկսեալ պիտի սկսին մանկամատրի արձանագրութիւնները: Յետաքրքրուող ծնողներէն կը խնդրենք կապ հաստատել ներփակուած յայտարարութեան մէջ յիշուած հեռաձայնի համարին, ստանալու յաւելեալ տեղեկութիւններ:

Սիրելիներ,

Հայ Առաքելական Եկեղեցւոյ Ս. Զատիկին առիթով ընդունեցէք իմ սրտագին բարեմաղրութիւնները:

Քրիստոս յարեալ ի մեռելոց, օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Վարդգէս Մահտեսեան

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ

ԵՌԱՄՍԵՎՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Կիպրահայ գաղութի կեանքէն

Կիրակի, 13 Յունուար 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ, Մելգոննեան անմահ բարերարներու յիշատակին մատուցուած Հոգեհանգատեան պաշտօնին: Ապա, Պետական Ներկայացուցիչը, ազգայիններու ընկերակցութեամբ, այցելեց Մելգոննեան բարերարներու դամբանը իր յարգանքի տուրքը մատուցելու:

Չարաթ, 19 Յունուար 2013-ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան նախագահական թեկնածու Նիկոս Անաստասիատիսի փափաքով տրուած այցելութեան, որ տեղի ունեցաւ Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ե.Ս. ակումբին մէջ: Նախագահական թեկնածուի բազմանդամ պատուիրակութեան մէջ կը գրտնուելին ՏԻԿՕ կուսակցութեան նախագահ Մարիոս Կարոյեան, Ստրովլոսի քաղաքապէտ Լազարոս Սավիտիս, Երրորեսփոխաններ Եռաննիս Կասուլիտիս եւ Էլէնի Թէոխարուս:

Նոյն օրը Երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ledra Rotary Club-ի կազմակերպած «From Hearts to Hearts» բարեսիրական բնոյր կրող գեղարուեստական ելոյթին: Այս ձեռնարկին իրենց մասնակցութիւնը բերին Վարդան եւ Սոնա Կարկալոյեան արուեստագէտ ամոլը եւ Յիլտա Բարոյեանը:

Դինգշաբթի, 24 Յունուար 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ իր տիկինը, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Թելեմախոս Կանդիոս հաստատութեան կազմակերպած բարեսիրական բնոյր ունեցող գեղարւեստական ելոյթին, մասնակցութեամբ արուեստագէտներ՝

Ալեքս Մոսկովեանի եւ Նառա Սարտարեանի:

Կիրակի, 24 Փետրուար 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահիտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ մատուցուած հոգեհանգստեան արարողութեան՝ ի յիշատակ Սումկայիթեան ջարդի նահատակներուն:

Չորեքշաբթի, 27 Փետրուար 2013-ին, Պետական Ներկայացուցիչը ներկայ գտնուեցաւ չորս նախակրթարան դպրոցներու՝ ներառեալ Նիկոսիոյ Նարեկ հայկական Վարժարանի միօրեայ միջոցառումին, կազմակերպութեամբ Մարտնիթ Յամայնքի Այիս Մարտնաս դպրոցին «Բոլորս տարբեր, բոլորս հաւասար» թեմայով:

Ուրբաթ, 29 Մարտ 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահիտեսեաններ իրենց բնակարանին մէջ հիւրասիրեցին Հ.Ս.Ը.Ս.-ի Միջ-դիւնային 8-րդ խորհրդաժողովին տարբեր երկիրներէ Կիպրոս ժամանած պատուիրակութիւնները: Իսկ Կիրակի, 31 Մարտ 2013-ին, յատկապէս հրաւիրւելով, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկիննը ներկայ գտնուեցան այս առիթով Հ.Ս.Ը.Ս.-Հ.Ե.Ս.-ի սրահին մէջ տեղի ունեցած ճաշկերոյթին:

Սուրիահայութեան նուիրուած Յամերգ՝ «Մենք Կ'երգենք Զեզի Յամար»

Կիրակի, 27 Յունուար 2013-ի երեկոյեան, միացեալ կազմակերպութեամբ Ազգային Իշխանութեան եւ Երեսփոխանական Գրասենեակին, Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի սրահին մէջ մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ «Մենք Կ'երգենք Զեզի Յամար» գեղարուեստական երեկոն՝ նուիրուած Սուրիահայութեան: Սրահը լեցուած էր հոծ բազմութեամբ, իսկ ձեռնարկի իրականացնան համար, սիրայօժար կերպով իրենց մասնակցութիւնը բերին Կիպրահայ արուեստագետներ, ներկաներուն պարգեւելով անմոռա-



նալի պահեր: Մեկնաբանուեցան արդի ու դասական յօրինումներ եւ զուգերգներ, ինչպէս նաև հրամցուեցան երաժշտական կատարումներ: Առաջին անգամ ըլլալով, Կիպրահայ գաղութը կարողացաւ տեղական ուժերով իրականացնել բարձրորակ համերգ մը, 90 վայրկեան տեւողութեամբ, որ տպաւորիչ խանդավառութիւն ստեղծեց բոլորին մօտ եւ անսահման գոհունակութիւն պատճառեց կազմակերպիչ կողմերուն:

Բացման խօսքով ելոյթ ունեցաւ Տիկին Անահիտ Էսկիճեան, որ իր կարգին մեծ ներդրում ունեցած էր համերգի կազմակերպչական աշխատանքներուն մէջ: Օրուան հանդիսավարն էր Տիկին Ռօզին Մոմճեան: Բեմայարդարումը կատարած էր Պրն. Յարեթ Թուլումճեան, իսկ լուսաւորման սարքաւորումները հայթայթուած էին Պրն. Սիմոն Թոփարիտիսի կողմէ: Յիշատակութեան արժանի են բոլոր մասնակիցները, որոնք ստացան անհատական շնորհաւորագիրներ Պետական Ներկայացուցիչին կողմէ. Յովիկ Տեմիրճեան, Գոռ Մելեան, Մարի-Լուիզ Գույումճեան, Ալիսիա Ոս-

կանեան, Յայկ Մահտեսեան, Նառա Սարտարեան, Լիլիան Խաչատուրեան, Քիլտա Բարոյեան եւ Ալեքս Մուկոֆեան:

Երեկոն վերջ գտաւ մասնակից արուեստագէտներու Երեւան-Երեբունի խմբերգի կատարողութեամբ եւ ապա՝ Սրբազն Յօր քաջալերական խօսքերով:



Այս ծերնարկի իրազործումով փաստուեցաւ, թէ միասնական ուժերով եւ բոլորին մասնակցութեամբ, կարելի է հասնիլ գերազանց արդիւնքներու: Յիշենք, թէ ծերնարկին հասոյթը, ներառեալ այս առիթով եղած նույիրատութիւնները, հասան չորս հազար եւրոյի:

Պաշտօնական մակարդակի հանդիպումներ եւ ծերնարկներ

Ուրբաթ, 11 Յունուար 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, յատուկ իրաւեր ստանալով, ներկայ գրտնուեցան Եւրոպայի ժողովրդային Կուսակցութիւններու ղեկավարներուն ի պատիւ տրուած պաշտօնական ընթրի-

քին, որ տեղի ունեցաւ Լիմասոլի Four Seasons պանդոկին մէջ:

Շաբաթ, 26 Յունուար 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգևս Մահտեսեաններ, ներկայ գտնուեցան Քրիստոնէական Կեղործին մէջ տեղի ունեցած Յրէական Ողջակիզման ի յիշատակ կազմակերպուած միջոցառումին:

Չորեքշաբթի, 13 Փետրուար 2013-ին, Պրն. Մահտեսեան պաշտօնական այցելութիւն մը տուաւ Կիպրոսի մէջ Ամերիկայի Միացեալ Նախանգներու Դեսպան Ն.Վ. ճն Քէօնիկին: Պետական Ներկայացուցիչը իր ու Կիպրահայրեան երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը փոխանցեց Պրն. Դեսպանին, անոր ցուցաբերած աջակցութեան եւ անդուլ աշխատանքին համար, որ ի գործ դրաւ, առ այժմ փրկելու Վիքրորիա փողոցին վրայ գտնուող Յայկական Եկեղեցական համալիրը մշակութային կեդրոնի վերածուելու վտանգէն: Իր կարգին, Պրն. Դեսպանը շնորհաւորեց Յայ համայնքը, իր ցուցմունքներուն հետեւած ըլլալուն եւ համբերութեան համար: Այս առիթով, Պետական Ներկայացուցիչը Պրն. Քէօնիկին յանձնեց ճոխ թղթապանակ մը, որուն մէջ տեղ գտած էին Կիպրոսի մէջ լոյս տեսած հայատար եւ օտարալեզու հրատարակութիւններ, պատմական արժեք ներկայացնող գրքոյկներ եւ արձանագրութիւններ, որոնք կը վերաբերին Կիպրահայ գաղութի ծագման, պատմամշակութային արժեքներուն եւ մինչեւ օրս հոլովոյթին: Ան Պրն. Դեսպանէն խնդրեց վերոնշեալ արժեքաւոր նիւթերը տեղադրել տալ Ամերիկայի Միացեալ Նախանգներու Քոնկրէսի գրադարանին մէջ:

Չորեքշաբթի, 6 Մարտ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը, հրաւէր ստանալով, ներկայ գտնուեցան Կիպրոսի նորընտիր Նախագահ Նիկոս Անաստասիատիսի ու իր ազնուափայլ տիկնոց կազմակերպած ընդունելութեան, որ տեղի ունեցաւ նախագահական պալա-

տին մէջ:

Երեքշաբթի, 12 Մարտ 2013-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահիտեսեաններու բնակարանին մէջ, տեղի ունեցաւ հրաժեշտի ընթրիք՝ ի պատիւ Սլովաքիոյ Դեսպան Ն.Վ. Աննա Թուրինիչովայի, ներկայութեամբ կարգ մը այլ երկիրներու դեսպաններուն:

Ուրբաթ, 15 Մարտ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնութեցան Լաչչայի քաղաքապետարանի սրահին մէջ տեղի ունեցած Բազմանշակութային Հրաժեշտի երեկոյին՝ ի պատիւ Սլովաքիոյ ընթացաւարտ Դեսպան Ն.Վ. Աննա Թուրինիչովային: Այս միջոցառումին, իր սրտի խօսքը արտասանեց Պրն. Վարդգէս Մահիտեսեան, ընդգծելով Դեսպանին ունեցած իւրայատուկ դերը ու տարած լայնածաւալ աշխատանքը, քով քովի բերելու Կիպրոսի բոլոր համայնքները: Այս երեկոյին, մի քանի պարերով, ելոյթ ունեցաւ նաեւ Համազգայինի «Սիփան» պարախումբը:

Ուրբաթ, 22 Մարտ 2013-ին, Կիպրոսի Կառավարութեան մօտ Կրօնական Փոքրանասնութիւններու հարցերով նո-



րանշանակ պատասխանատու՝ Տիկին Քէթի Քլիրիտու, իր իսկ վափաբռով, հանդիպում մը ունեցաւ Պետական Ներկայացուցիչին հետ, մօտէն ծանօթանալու եւ քննելու Կիպրահայ Հանայնքի դիմագրաւած զանազան դժուարութիւնները:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Վարչապետի այց



Երկուշաբթի, 25 Մարտ 2013-ին Կիպրոս ժամանեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Վարչապետ Տիար Արա Յարութիւնեան ու իր գլխաւորած պատուիրակութիւնը: Նոյն օրը կէսօրէ ետք, «Դիլթըն Փարք» պանդոկին մէջ տեղի ունեցաւ Վարչապետին հանդիպումը Կիպրահայ համայնքի գործարարներուն հետ «Socio-economic Development Programme and Investment Opportunities of Nagorno Karabagh» նիւթին ներկայացումով: Այս հանդիպումին, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Կիպրահայ Հանայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն.

Վարդգես Մահտեսեան, ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ ու լիազօր Դեսպան Պրն. Գագիկ Ղալաչեան եւ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս Հերկելեան:

Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը իր տան մէջ հիւրասիրեց Վարչապետ Յարութիւնեանը, ուր ներկայ էին Կիպրոսի Եւրոխորհրդարանի անդամներէն Դոկտ. Էլէնի Թեղիսարուսը եւ Անտրէաս Փիթսիլիտիսը: Պրն. Մահտեսեան խօսք առնելով փափաք յայտնեց, որ ալ աւելի ամրապնդուին Կիպրոսի Եւրոխորհրդարանի անդամներուն եւ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններուն հետ սերտ կապերը:

Երեքշաբթի, 26 Մարտ 2013-ին, Պետական Ներկայացուցիչը, ընկերակցութեամբ Լեռնային Ղարաբաղի Վարչապետ Արա Յարութիւնեանի, այցելեցին Կիպրոսի Առեւտուրի եւ Արդիւնաբերութեան Գրասենեակի Նախագահ Պրն. Ֆիլիտիսին:

Ծնորհաւորական Գիրեր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգես Մահտեսեան, 4 Յունուար 2013-ին անջատ գիրեր յղելով, իր ու Կիպրահայութեան անունով շնորհաւորեց Ն.Ս.Օ.Ս.Ս Արամ Ա. Կաթողիկոսին, ՀՀ Յունաստանի եւ Կիպրոսի արտակարգ եւ լիազօր Դեսպան Ն.Վ. Գագիկ Ղալաչեանին եւ ՀՀ Սփիլոքի նախարար Տիկին Հրանուշ Յակոբեանին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով անոնց արեւշատութիւն, իսկ մեր Մայր Հայութենիքին բարգաւաճում:

14 Յունուար 2013 թուակիր նամակով մը, Պետական Ներկայացուցիչը իր ու Կիպրահայ համայնքին անունով շնորհաւորեց Եւրոերեսփոխան Էլէնի Թեղիսարուսը, Վերջինիս նախաձեռնութեամբ ու ջանքներով հիմնուած Եւրոպական Միութիւն-Հայաստան Բարեկամական Խումբի

կազմաւորման եւ նախագահ ընտրուելուն ուրախ առիթներով: Ան իր խոր յուզմունքը եւ երախտագիտութիւնը յայտնեց հայասէր ու հայութեան անկեղծ բարեկամ Տիկին Թէոխարուսին, յաջողութիւն մաղթելով իր ապագայ աշխատանքներուն մէջ:

Երուսաղէմի Յայոց Պատրիարքութեան Ս. Աթոռին 97-րդ Պատրիարք ընտրուելուն առիթով, Պրճ. Մահտեսեան Փետրուար 1-ին, յատուկ շնորհաւորագիր մը յղեց Ամենապատի Տէր Նորիհան Արք. Մանուկեանին, մաղթելով անոր քաջառողջութիւն եւ արեւշատութիւն:

Չորեքշաբթի, 20 Փետրուար 2013-ին, Պետական Ներկայացուցիչը շնորհաւորագիր մը յղեց ՀՀ նախագահ Ն.Վ. Տիար Սերժ Սարգսեանին, շնորհաւորելով անոր վերընտրութիւնը ու մաղթեց, որ ան շարունակէ իր անսակարկ ծառայութիւնը ի սպաս դնել համայն հայութեան ընդհանրական ու գերագոյն շահենուն:

Կիպրահայ Յամայնքի Պետական Ներկայացուցիչ Պրճ. Վարդգէս Մահտեսեան, 25 Փետրուար 2013 թուակիր յատուկ գիրով մը, իր ու Կիպրահայութեան կողմէ ջերմօրէն շնորհաւորեց Պրճ. Նիկոս Անաստասիատիսը, Կիպրոսի նախագահ ընտրուելուն առիթով:

Իսկ Մարտ 1-ին, Պետական Ներկայացուցիչը անհատական նամակներ յղելով, իր շնորհաւորանքները փոխանցեց իւրաքանչիւր նորանշանակ նախարարի, անոնց փոխանցելով իր պատրաստակամութիւնը միասնաբար քննելու Կիպրահայութիւնը յուզող որեւէ հարց:



Ծանօթանանք Կիպրոսի Համբարձութեան Օրէնքներուն

**«Եռլրոկրուփ»ի Եւ Կիպրոսի Կառավարութեան
միջեւ Վարկային Համաձայնագիրի
հիմնական կէտեր**

Ստորեւ, հակիրծ ծերով նշած ենք «Եռլրոկրուփ»ի Եւ Կիպրոսի Կառավարութեան միջեւ տնտեսական կայունացման գծով համաձայնուած կէտերը, որոնք 25 Մարտ 2013-ի առաւտեան կանուխ ժամերուն հրապարակուեցան: Առ ի գիտութիւն յիշենք, ըստ մինչեւ օրս ստացուած տեղեկութիւններուն, **Լայիկի Դրամատան** մէջ գտնուող միայն մինչեւ 100,000 Եւրօ խնայողական հաշիւները ապահովուած են: Գալով Կիպրական Դրամատան պարագային, մինչեւ 100,000 Եւրօ խնայողական հաշիւները ապահովուած են, իսկ 100,000 Եւրոյէն վեր հաշիւները Ենթակայ պիտի ըլլան 40%-ի շուրջ հարկադրումի: Ինչ կը վերաբերի Կիպրոսի մէջ գործող մնացեալ դրամատուներուն, նոյնիսկ 100,000 Եւրոյէն վեր հաշիւները ապահովուած են ու Ենթակայ պիտի ըլլան հարկադրումի:

- **Լայիկի** դրամատունը անմիջապէս լուծարքի պիտի Ենթարկուի բաժնետերերու, բաժնետոնսերու Եւ չերաշխաւոր-

ւած գումարներու լրիւ մասնակցութեամբ:

- **Լայիկի** դրամատունը պիտի բաժնուի «Հաւ» եւ «Վատ» դրամատուներու: «Վատ» դրամատունը ժամանակի ընթացքին պիտի փակուի:

- «Հաւ» դրամատունը պիտի ներառուի **Կիպրական Դրամատան** (BOC) ներքոյ, իր հետ տանելով Արտակարգ Հնչուն Դրամի Աջակցութեան (Emergency Liquidity Assistance) կողմէն ստացած շուրջ 9 միլիար եւրո օժանդակութիւնը: Միայն չերաշխաւորուած խնայողութիւնները պիտի սառեցուին մինչեւ անոնց վերաշահարկումը:

- Եւրոպական Կենտրոնական Դրամատան (ECB) Կառավարման Խորհուրդը պիտի շարունակէ **Կիպրական Դրամատան** հնչուն դրամի տրամադրումը՝ ըստ կիրառելի կանոններուն:

- **Կիպրական Դրամատունը** դրամագլուխներու վերադասարկման (recapitalisation) պիտի ենթարկուի խնայողական հաշիւներու / բաժնետերերու չերաշխաւորուած գումարներու փոխարկումով՝ բաժնետոնսերու եւ բաժնետերերու լրիւ մասնակցութեամբ:

- Փոխարկումը այնպէս մը պիտի ըլլայ, որ ծրագիրի վերջաւորութեան ապահովուի 9% դրամագլուխի յարաբերակցութիւնը:

- Բոլոր դրամատուներուն մէջ երաշխաւորուած հաշիւներ ունեցող հաշուետերերը, պիտի պաշտպանուին ըստ Եւրոպական Միութեան օրենսդրութեան:

- Տրամադրուած օժանդակութիւնը՝ մինչեւ 10 միլիար եւրո, պիտի չգործածուի **Լայիկի** եւ **Կիպրական Դրամատան** դրամագլուխներու վերադասարկման համար:

«Նանոր» Հայկական Մանկական Կեդրոն 2013-2014 Դպրոցական Տարեշրջան Արձանագրութիւններ

Սիրելի ծնողներ,

Այսու մեծ հաճոյքով կը յայտարարենք, թէ «Նանոր» Հայկական Մանկական Կեդրոնի 2013-2014 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները կը սկսին 15 Ապրիլ 2013-էն մինչեւ 15 Մայիս 2013 եւ կամ մինչեւ տեղերու ամբողջացումը:

Դպրոցական տարեշրջանը կը սկսի 2 Սեպտեմբեր 2013-ին: Կրնան արձանագրուիլ 4 ամսականէն մինչեւ 3 տարեկան երեխանները:

«Նանոր» Մանկական Կեդրոնը պիտի գործէ Երկուշաբթիեն մինչեւ Ուրբաթ, ժամը 07.00-18.00 (ըստ պահանջարկի) որպէսզի գոհացում տրուի երկարաժամ աշխատանք ունեցող ծնողներու կարիքներուն: Փակ պիտի մնայ միայն պետական տօններուն եւ Օգոստոս ամսուան ընթացքին:

Յաւելեալ տեղեկութիւններու, վճարումի եւ այլ մանրամասնութիւններու համար կը խնդրուի կապ հաստատել 97-808414 թիւին ժամը 08.30 մինչեւ 14.30:

Վարչական Խորհուրդ
«ՆԱՆՈՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԻ

**Վարդգէս եւ Մակի Մահտեսեաններ
Քրիստոսի Յարութեան
Սուրբ տօմին առիթով
կը շնորհաւորեն
Կիպրահայ Համայնքը
եւ մեր հայրենակիցները
մաղթելով՝ առողջութիւն եւ
արեւշատութիւն**

**Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրինեալ է Յարութիւնն Քրիստոսի**

**ԿԻՊՐԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ**

Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախոս 22- 45 45 40, Հեռատիպ 22- 42 46 42

Ել. Հասցե office@armenianmp.com

Ուստայնեց՝ <http://www.armenianmp.com>

Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia

Հեռախոս 22- 40 72 02, Հեռատիպ 22- 40 74 42

Ել. Հասցե vmahdessian@parliament.cy